

Կ-116-25.04.2019,25.09.2019-ՖՎ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը

1. Սույն օրենքը սահմանում է հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) պատրաստելու և ներկայացնելու միասնական հիմունքները, կարգավորում է հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող իրավաբանական անձանց (ներառյալ՝ դրանց ստեղծած հիմնարկների), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների (այսուհետ՝ կազմակերպություններ), ինչպես նաև օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով սահմանված խմբերի վրա:

2. Սույն օրենքը չի տարածվում՝

1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վրա.

2) «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողության ոլորտում գտնվող կազմակերպությունների վրա.

3) Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների վրա, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը.

4) ներդրումային ֆոնդերի վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Ստորև նշված հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են հետևյալ իմաստով՝

1) հաշվապահական հաշվառում՝ կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի, ինչպես նաև եկամուտների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ՝ գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և փաստաթղթային հաշվառման միջոցով.

2) ֆինանսական հաշվետվություններ՝ կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացում.

3) Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (այսուհետ՝ ամբողջական ՖՀՄՍ-ներ)՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ (սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կազմակերպությունների համար՝ անկախ այդ գործողությունից) դրված ստանդարտները և դրանց մեկնաբանությունները: Ամբողջական ՖՀՄՍ-ները ներառում են՝

ա. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (IFRS).

բ. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (IAS).

գ. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների մեկնաբանությունների կոմիտեի մեկնաբանությունները (IFRIC).

դ. Մեկնաբանությունների մշտական կոմիտեի մեկնաբանությունները (SIC).

4) Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներ՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները (այսուհետ՝ հայեցակարգային հիմունքներ).

5) փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ).

6) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն՝ կազմակերպություն՝

ա. որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ կամ հաշվետու թողարկող, բացառությամբ արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ կամ հաշվետու թողարկող հանդիսացող Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը, կամ

բ. որը հանդիսանում է բանկ, վարկային կազմակերպություն, վճարահաշվարկային կազմակերպություն, ներդրումային ընկերություն, կարգավորվող շուկայի օպերատոր, կենտրոնական դեպոզիտարիա, ապահովագրական ընկերություն, վերաապահովագրական ընկերություն, ապահովագրական բրոքերային կազմակերպություն կամ ներդրումային ֆոնդի կառավարիչ.

7) խոշոր կազմակերպություն՝ կազմակերպություն, որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

8) միջին կազմակերպություն՝ կազմակերպություն, որը չի հանդիսանում փոքր կամ միկրոկազմակերպություն և որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

9) փոքր կազմակերպություն՝ կազմակերպություն, որը չի հանդիսանում միկրո կազմակերպություն և որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ երկու միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ չորս միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ հարյուր.

10) միկրո կազմակերպություն՝ կազմակերպություն, որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ հարյուր յոթանասունհինգ միլիոն դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ երեք հարյուր հիսուն միլիոն դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ տասը.

11) խումբ՝ մայր կազմակերպությունը և իր դուստր կազմակերպությունները.

12) մայր կազմակերպություն՝ կազմակերպություն, որը վերահսկում է մեկ կամ ավելի դուստր կազմակերպությունների.

13) դուստր կազմակերպություն՝ կազմակերպություն, որը վերահսկվում է մեկ այլ կազմակերպության կողմից.

14) խոշոր խումբ՝ խումբ, որը մայր կազմակերպության հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ համախմբման հիմունքով գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

15) միջին խումբ՝ խումբ, որը չի հանդիսանում փոքր խումբ, և որը մայր կազմակերպության հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ համախմբման հիմունքով չի գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

16) փոքր խումբ՝ խումբ, որը մայր կազմակերպության հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ համախմբման հիմունքով չի գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ երկու միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ չորս միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ հարյուր.

17) փորձագետ հաշվապահ՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի փորձագետ հաշվապահի որակավորում.

18) աուդիտոր՝ ինչպես սահմանված է «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

19) պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրք (այսուհետ՝ Մասնագիտական էթիկայի կանոնագիրք)՝ ինչպես սահմանված է «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

20) մասնագիտացված կառույց՝ ինչպես սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

2. Որպես այլընտրանք, սույն հոդվածի 1-ին մասի 14-16-րդ կետերի «ա» և «բ» ենթակետերով նշված ցուցանիշները կարելի է հաշվարկել ոչ թե համախմբման հիմունքով, այլ համապատասխան ցուցանիշների թվաքանակական գումարման միջոցով: Այս դեպքում «ա» և «բ» ենթակետերով նշված ցուցանիշների սահմանաչափերը համապատասխանաբար ավելանում են քսան տոկոսով:

Հոդված 4. Հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը

1. Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը (այսուհետ՝ քաղաքականություն իրականացնող մարմին) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

2. Բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերներային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների համար հաշվապահական հաշվառման ոլորտում կարգավորման

գործառույթներ իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է՝ քաղաքականություն իրականացնող մարմնի հետ՝ համատեղ:

Հոդված 5. Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը

1. Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝

1) սույն օրենքը.

2) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

3) ամբողջական ՖՀՄՍ-ները և հայեցակարգային հիմունքները.

4) ամբողջական ՖՀՄՍ-ների հիման վրա մշակված՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները.

5) հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր:

2. Միջին կազմակերպությունների և փոքր կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝

1) սույն օրենքը.

2) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

3) ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն.

4) ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի հիման վրա մշակված՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները.

5) հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր:

3. Միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝

1) սույն օրենքը.

2) միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկը.

3) միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկի հիման վրա մշակված՝ միկրո

կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը:

4. Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար միջին կազմակերպությունները և փոքր կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են կիրառել սույն հոդվածի 1-ին մասով նշված իրավական ակտերը, իսկ 3-րդ մասում նշված իրավական ակտերը չեն կարող կիրառել:

5. Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները չեն կարող կիրառել սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված իրավական ակտերը:

6. Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար միկրո կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են կիրառել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված իրավական ակտերը:

7. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կազմակերպությունները ամբողջական ՖՀՄՄ-ները և հայեցակարգային հիմունքները պարտավոր են կիրառել Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից սահմանված ժամկետներում՝ անկախ վերջիններիս հայերեն թարգմանված լինելու հանգամանքից:

Հոդված 6. Հաշվապահական հաշվառման կարգավորումը

1. «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Հանրային վերահսկողության խորհուրդը (այսուհետ՝ Հանրային վերահսկողության խորհուրդ) ապահովում է հետևյալ իրավական ակտերի նախագծերի մշակումը՝

1) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը.

2) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները.

3) միջին կազմակերպությունների և փոքր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը.

4) միջին կազմակերպությունների և փոքր կազմակերպությունների ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները.

5) միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկը.

6) միկրո կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը.

7) սույն օրենքով նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտեր:

2. Հանրային վերահսկողության խորհուրդն ապահովում է ամբողջական ՖՀՄՍ-ների, հայեցակարգային հիմունքների, ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի, ինչպես նաև դրանցում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների թարգմանությունն ու դրանց պաշտոնական հրապարակումը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասում նշված իրավական ակտերը ուժի մեջ են մտնում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՄԸ

Հոդված 7. Հաշվապահական հաշվառման վարումը

1. Բոլոր կազմակերպությունները (ներառյալ՝ անվճարունակության կամ լուծարման գործընթացում գտնվողները) պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում:

2. Կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով, եթե Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ նախորդ տարվա համախառն եկամտի չափը գերազանցել է 500 մլն դրամը:

3. Սույն հոդվածում նշված համակարգչային ծրագրերի՝ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները չեն վերաբերում բանկերին, վարկային կազմակերպություններին, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպություններին, վճարահաշվարկային կազմակերպություններին, կարգավորվող շուկայի օպերատորին, կենտրոնական դեպոզիտարիային, վերաապահովագրական ընկերություններին, ապահովագրական բրոքերային կազմակերպություններին, ներդրումային ֆոնդի կառավարիչներին, ապահովագրական ընկերություններին և ներդրումային ընկերություններին, որոնց մոտ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգերի ներդրման պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

5. Կազմակերպության հաշվապահական հաշվառումը վարվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների պահպանմամբ:

Հոդված 8. Կազմակերպության ղեկավարության իրավունքները և պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում

1. Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու և ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար:

2. Սույն օրենքի իմաստով, կազմակերպության ղեկավարություն է համարվում գործադիր մարմնի ղեկավարը, լուծարվող կազմակերպության անվճարունակության կառավարիչը, արտաքին կառավարիչը, անհատ լուծարողը, լուծարային հանձնաժողովի նախագահը (այսուհետ՝ կազմակերպության ղեկավար), ինչպես նաև կազմակերպության կանոնադրությամբ կամ ներքին իրավական ակտերով կամ այլ իրավական ակտերով նախատեսված այլ մարմիններ և անձինք:

3. Կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է՝

- 1) կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով.
- 2) կազմակերպության աշխատողը համարվող հաշվապահի միջոցով.
- 3) հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցով.

4) կազմակերպության ղեկավարի կողմից՝ անձամբ:

4. Կազմակերպության ղեկավարը սահմանում է կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, եթե այդ իրավասությունը օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված չէ կառավարման այլ մարմնին:

Հոդված 9. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները

1. Կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ կազմակերպության լիազորած անձը կամ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված այլ անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

2. Գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու համար:

3. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար:

4. Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

Հոդված 10. Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպության, խոշոր և միջին կազմակերպության գլխավոր հաշվապահը

1. Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություններում, խոշոր կազմակերպություններում և միջին կազմակերպություններում գլխավոր հաշվապահ կարող են աշխատել միայն փորձագետ հաշվապահները և աուդիտորները: Այն դեպքում, երբ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունում, խոշոր կազմակերպությունում և միջին կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է մասնագիտացված կազմակերպության կողմից, ապա վերջինիս կողմից գլխավոր հաշվապահի գործառույթներն իրականացնող լիազորված անձը ևս պետք է լինի փորձագետ հաշվապահ կամ աուդիտոր:

2. Փորձագետ հաշվապահները պարտավոր են պահպանել Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջները:

3. Բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարչի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների և ապահովագրական բրոքերային կազմակերպությունների գլխավոր հաշվապահ աշխատելու համար, ի լրումն սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների, ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել լրացուցիչ պահանջներ:

Հոդված 11. Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները

1. Հաշվապահական հաշվառումը վարվում է՝

1) կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիման վրա.

2) անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև նրա գործունեության դադարեցման գրանցման համար դիմումը պետական ռեգիստր մուտքագրելու օրը:

2. Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:

Հոդված 12. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը

1. Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը: Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները նույնականացնող անհրաժեշտ վավերապայմաններ:

2. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր վավերապայմանները.

ա) փաստաթղթի անվանումը.

բ) հերթական համարը.

գ) կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

դ) գործառնության մասնակիցների (մասնակցի) անվանումը (անունը, ազգանունը).

ե) տնտեսական գործառնության բովանդակությունը.

զ) տնտեսական գործառնության չափման միավորները՝ դրամական և բնաիրային արտահայտությամբ.

է) պատասխանատու անձանց պաշտոնները և նրանց ստորագրությունները:

Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերում կարող են ներառվել լրացուցիչ վավերապայմաններ՝ կախված գործառնության բնույթից և տվյալների մշակման համակարգից: Լրացուցիչ վավերապայմանները կարող են սահմանել Հանրային վերահսկողության խորհուրդը և (կամ) կազմակերպությունը:

3. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

4. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք:

5. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքվում և համակարգվում է հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում՝ ժամանակագրական կարգով:

6. Հանրային վերահսկողության խորհուրդը կարող է սահմանել սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի ձևեր:

Հոդված 13. Ստորագրության իրավունքը հաշվապահական հաշվառման փաստաթղթերում

1. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարությունը, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

Հոդված 14. Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը

1. Հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպությունները տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու նպատակով պարտադիր անցկացնում են ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Պարտադիր գույքագրման անցկացման կարգը սահմանում է Հանրային վերահսկողության խորհուրդը:

2. Բացի սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքից, գույքագրման օբյեկտների կազմը և գույքագրման անցկացման կարգը որոշում է կազմակերպության ղեկավարը:

Հոդված 15. Հաշվապահական տեղեկատվության գաղտնիությունը

1. Սկզբնական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար պատրաստված հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը համարվում է առևտրային գաղտնիք, որին կարելի է ծանոթանալ օրենքով կամ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով, ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

2. Առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությանը ծանոթացած անձինք և կազմակերպությունները պարտավոր են պահպանել դրա գաղտնիությունը: Առևտրային գաղտնիքն ապօրինի հրապարակելու դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան:

3. Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը առևտրային գաղտնիք չի համարվում:

Հոդված 16. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը

1. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերում և էլեկտրոնային կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը կազմակերպության կողմից պահպանվում են օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի ժամկետով:

2. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի առգրավումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Կազմակերպությունն իրավունք ունի առգրավված փաստաթղթերը կրկնօրինակել և պահել իր մոտ:

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 17. Փորձագետ հաշվապահների որակավորումը

1. Փորձագետ հաշվապահների որակավորումը սույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջներին բավարարող՝ փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի (այսուհետ՝ դիմող)՝ սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին բավարարման հավաստումն է (այսուհետ՝ որակավորում):

2. Որակավորումը տրվում է մասնագիտացված կառույցի կողմից: Որակավորումը տրվում է այն դիմողին, որը միաժամանակ՝

1) հանձնել է որակավորման քննությունները.

2) որակավորումը ստանալու համար դիմումներ կայացնելու պահին ունի բարձրագույն կրթություն.

3) որակավորումը ստանալու համար դիմումներ կայացնելու պահին ունի հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և (կամ) աուդիտորական գործունեության իրականացման հետ կապված երեք տարվա աշխատանքային փորձ: Աշխատանքային փորձին վերաբերող պահանջները սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

3. Որակավորման քննությունների ծրագիրը (այդ թվում քննական առարկաների կազմը) և քննությունների անցկացման կարգը հաստատում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ: Որակավորման քննությունները կազմակերպվում և անցկացվում են մասնագիտացված կառույցի կողմից:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը համարվում է բավարարված դիմողի կողմից քննական բոլոր առարկաների գծով քննությունները հանձնելու դեպքում: Մասնագիտացված կառույցի կողմից սահմանված և Հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցված որակավորման քննություններից ազատման կարգի համաձայն դիմողը կարող է ազատվել որոշակի առարկաների գծով քննություններ հանձնելուց:

5. Որակավորում չտալու վերաբերյալ որոշում կայացվում է այն դեպքում, երբ դիմողը չի համապատասխանում սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

6. Փորձագետ հաշվապահը պարտավոր է որակավորում ստանալու տարվան հաջորդող տարվանից սկսած անցնել շարունակական մասնագիտական զարգացում, որի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ: Շարունակական մասնագիտական զարգացման

տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 20 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար՝ 80 ժամից:

7.Սույն հոդվածի համաձայն որակավորում ստացած դիմողին մասնագիտացված կառույցի կողմից տրվում է որակավորման վկայական: Որակավորման վկայականի ձևը և տրման կարգը սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

Հոդված 18. Փորձագետ հաշվապահների որակավորման քննությունների կազմակերպումը

1. Փորձագետ հաշվապահների որակավորման քննություններն անցկացնում է մասնագիտացված կառույցի կողմից ստեղծված փորձագետ հաշվապահների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի անհատական կազմը և կանոնադրությունը հաստատում է մասնագիտացված կառույցը: Հանձնաժողովի կանոնադրությունը համաձայնեցվում է Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

2. Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը փոխհատուցելու նպատակով մասնագիտացված կառույցը դիմողից գանձում է վճար: Վճարի չափը սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

Հոդված 19. Դիմողին ներկայացվող պահանջները

1. Փորձագետ հաշվապահների որակավորման քննությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող այլ անձինք, ովքեր ունեն միջնակարգ կրթություն:

2. Փորձագետ հաշվապահների որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում այն անձին, ով՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատարանի վճռով զրկվել է ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից, բացառությամբ, եթե դատվածությունը հանված կամ մարված է:

Հոդված 20. Որակավորման ժամկետը

1. Որակավորումը տրվում է անժամկետ:

Հոդված 21. Որակավորման չեղարկման հիմքերը և կարգը

1. Որակավորումը չեղարկվում է այն դեպքերում, երբ՝

1) որակավորումը ստացվել է սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով կամ 19-րդ հոդվածով դիմողին ներկայացված պահանջների խախտմամբ.

2) ուժի մեջ է մտել դատարանի վճիռը, որը որպես պատիժ նախատեսում է որոշակի ժամկետով ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկում.

3) չեն պահպանվել սույն օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն.

4) փորձագետ հաշվապահը խուսափում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արտաքին գնահատման ենթարկվելուց կամ արտաքին գնահատման արդյունքներով ստացել է «5» գնահատական:

2. Որակավորման չեղարկման որոշումն ընդունվում է մասնագիտացված կառույցի կողմից:

3. Որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհրդին՝ չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

4. Բողոքարկման ընթացքում որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կասեցվում է: Բողոքարկման ընթացքում փորձագետ հաշվապահների՝ մասնագիտացված կառույցին անդամակցությունը համարվում է կասեցված: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկումը չբավարարելու դեպքում որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը մնում է անփոփոխ: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկումը բավարարելու դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա մասնագիտացված կառույցը կայացնում է որակավորման չեղարկումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

5. Անձը, որի որակավորումը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չունի որակավորման քննությունների համար կրկին դիմել մասնագիտացված կառույցին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նախատեսված ժամկետի ընթացքում:

ԳԼՈՒԽ 4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 22. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և կազմը

1. Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվություններ: Ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ամբողջական ՖՀՄՍ-ներով:

2. Խումբը, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է և խոշոր խմբերը ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ամբողջական ՖՀՄՍ-ներով:

3. Միջին կազմակերպությունները և փոքր կազմակերպությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվություններ: Ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով: Եթե միջին կազմակերպությունները և փոքր կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կիրառում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավական ակտերը, ապա ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն:

4. Միջին խմբերը և փոքր խմբերը ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով: Եթե միջին խմբերը և փոքր խմբերն իրենց հայեցողությամբ կիրառում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավական ակտերը, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն:

5. Միկրո կազմակերպությունները միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկի պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվություններ: Ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկով: Եթե միկրո կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կիրառում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերում նշված իրավական ակտերը, ապա ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել, համապատասխանաբար, ամբողջական ՖՀՄՍ-ների կամ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն:

Հոդված 23. Ֆինանսական հաշվետվությունների կազմմանը ներկայացվող պահանջները

1. Ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության ներկայացման վերաբերյալ պահանջները սահմանվում են՝

1) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների, ինչպես նաև խմբի, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է և խոշոր խմբերի համար՝ ամբողջական ՖՀՄՄ-ներում.

2) միջին և փոքր կազմակերպությունների, ինչպես նաև միջին և փոքր խմբերի համար՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ում.

3) միկրո կազմակերպությունների համար՝ միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկում:

2. Ֆինանսական հաշվետվություններն ստորագրում են կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը: Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքում ֆինանսական հաշվետվությունները կարող է ստորագրել միայն կազմակերպության ղեկավարը:

Հոդված 24. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարին և միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանը:

2. Հաշվետու տարին տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանն է: Նոր ստեղծված կազմակերպությունների համար առաջին հաշվետու տարի է համարվում դրանց պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Հաշվետու տարվա համար պարտադիր կազմվում են տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Օրացուցային տարվա ընթացքում գործունեությունը առանց իրավահաջորդության դադարեցրած կազմակերպության համար վերջին հաշվետու տարի է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

3. Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանը հաշվետու տարուց փոքր ժամանակաշրջան է: Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի համար միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվում են օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կամ կազմակերպությունների հայեցողությամբ:

Հոդված 25. Ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելը

1. Կազմակերպությունները և խմբերը ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են՝

1) մասնակիցներին (բաժնետերերին, փայատերերին)՝ օրենքի, կազմակերպության կանոնադրության կամ ներքին կանոնակարգերի համաձայն.

2) օրենքով սահմանված դեպքերում պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ անձանց՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.

3) վարկատուներին, փոխատուներին, կազմակերպության մասնակցությամբ տնտեսական գործունեության մյուս կողմերին՝ կամավորության հիմունքներով:

2. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր է համարվում դրանց՝ ըստ պատկանելության հանձնելու, էլեկտրոնային եղանակով կամ փոստով ուղարկելու օրը:

3. Հաշվետվությունները փոստի միջոցով ներկայացնելու օր է համարվում փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արտատիպը, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝ հաշվետվության ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան ծանուցման հիման վրա հաշվետվության ներկայացման օրը:

Հոդված 26. Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը

1. Ստորև ներկայացված կազմակերպությունների և խմբերի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի.

1) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները.

2) միջին կազմակերպությունները.

3) խումբը, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է և խոշոր խմբերը.

4) միջին խմբերը:

2. Բացի սույն հոդվածի 1-ին մասում թվարկված կազմակերպություններից և խմբերից, այլ օրենքով ևս կարող են սահմանել կազմակերպությունների և խմբերի տեսակներ, որոնց ֆինանսական հաշվետվություններն ենթակա են պարտադիր աուդիտի:

Հոդված 27. Ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնությունը

1. Բոլոր կազմակերպությունները և խմբերը, բացի փոքր կազմակերպություններից և խմբերից ու միկրո կազմակերպություններից, պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել:

2. Կազմակերպությունները և խմբերը, որոնց տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հրապարակման, պարտավոր են դրանք հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը, իսկ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու

պահանջ օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

3. Բանկերը, վարկային կազմակերպությունները, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողները, կարգավորվող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, ապահովագրական ընկերությունները, վերաապահովագրական ընկերությունները, ապահովագրական բրոքերային կազմակերպությունները, ներդրումային ֆոնդերի կառավարիչներն իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են համապատասխանաբար՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին», «Գրավատների և գրավատնային գործունեության մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում:

4. Սույն օրենքով և այլ օրենքներով աուդիտի ենթակա կազմակերպությունները և խմբերը (խմբի մայր կազմակերպությունը) պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո: Մնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները կարող են աուդիտի չենթարկվել:

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված կազմակերպությունների և խմբերի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հրապարակման աուդիտորական եզրակացության հետ: Առանց աուդիտորական եզրակացության, ինչպես նաև ոչ ամբողջական կազմով հրապարակված ֆինանսական հաշվետվությունները համարվում են չհրապարակված:

6. Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշվետվությունների պատկերամուտները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում, <http://www.azdarar.am> հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում: Ընդ որում, եթե կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները հրապարակել է իր ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում, ապա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) պարտավոր է հրապարակել նաև <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային

կայքում: Ֆինանսական հաշվետվությունները հրապարակումից հետո առնվազն 5 տարի պետք է պահպանվեն այն կայքում, որտեղ դրանք հրապարակվել են:

7. Կազմակերպություններն իրենց օրենքով հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակը կամ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալուց հետո տրամադրում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ այդ մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 28. Պատասխանատվությունը հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար

1. Կազմակերպության ղեկավարը և հաշվապահական հաշվառման կազմակերպման ու վարման համար պատասխանատու այլ անձինք հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Հոդված 29. Անցումային դրույթներ

1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն տրված հաշվապահի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից դրանց ժամկետը երկարաձգվում է մինչև 2023 թվականի հունվարի 1-ը, եթե սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին այդ վկայականները հանդիսանում են գործող:

2. Եթե «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն տրված հաշվապահի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո, ապա այդ վկայականները շարունակում են ուժի մեջ մնալ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը:

3. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 8-րդ մասերով նախատեսված վկայականները հիմք են հանդիսանում որպես փորձագետ հաշվապահ մասնագիտացված կառույցին անդամակցելու համար:

4. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն, ինչպես նաև սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված հաշվապահի որակավորման վկայական ունեցող հաշվապահները իրավունք ունեն

մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը մասնագիտացված կառույցի կողմից սահմանված պարզեցված կարգով ստանալ սույն օրենքով նախատեսված փորձագետ հաշվապահի որակավորման վկայական:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված մասնագիտացված կառույցի անդամը, ով ունի այդ մասնագիտացված կառույցի կողմից տրված հաշվապահի որակավորման վկայագիր, սույն օրենքով նախատեսված մասնագիտացված կառույցի կողմից սահմանված կարգով կարող է այդ վկայագիրը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը փոխարինել սույն օրենքով նախատեսված փորձագետ հաշվապահի որակավորման վկայականով:

6. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերը մնում են ուժի մեջ այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքի դրույթներին:

7. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն հաշվապահների որակավորման քննությանը մասնակցելու համար մինչև սույն օրենքով նախատեսված առաջին մասնագիտացված կառույցի հավատարմագրումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն դիմած դիմողների որակավորման քննություններն անցկացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 1048-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման կարգին համապատասխան:

8. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին գործող հանդիսացող՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարչի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի և ապահովագրական բրոքերային կազմակերպությունների հաշվապահի որակավորման վկայականների գործողության ժամկետը մինչև 2023 թվականի հունվարի 1-ը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրանց ժամկետը երկարաձգվում է մինչև 2023 թվականի հունվարի 1-ը: Եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված վերը նշված՝ հաշվապահի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո, ապա այդ վկայականները շարունակում են ուժի մեջ մնալ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը:

Հոդված 30. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքը:

Երկրորդ ընթերցում

Կ-116-25.04.2019,25.09.2019-ՖՎ-011/1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի նպատակը

1. Սույն օրենքը սահմանում է հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) պատրաստելու և ներկայացնելու միասնական հիմունքները, կարգավորում է հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող իրավաբանական անձանց (ներառյալ՝ դրանց ստեղծած հիմնարկների), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների (այսուհետ՝ կազմակերպություններ), ինչպես նաև օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով սահմանված խմբերի վրա:

2. Սույն օրենքը չի տարածվում՝

- 1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վրա.

2) «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողության ոլորտում գտնվող կազմակերպությունների վրա.

3) Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների վրա, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը.

4) ներդրումային ֆոնդերի վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Ստորև նշված հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են հետևյալ իմաստով՝

1) հաշվապահական հաշվառում՝ կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի, ինչպես նաև եկամուտների և ծախսերի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ՝ գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համընդհանուր և փաստաթղթային հաշվառման միջոցով.

2) ֆինանսական հաշվետվություններ՝ կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացում.

3) Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (այսուհետ՝ ամբողջական ՖՀՄՄ-ներ)՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ [\(սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կազմակերպությունների համար՝ անկախ այդ գործողությունից\)](#) դրված ստանդարտները և դրանց մեկնաբանությունները: Ամբողջական ՖՀՄՄ-ները ներառում են՝

ա. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (IFRS).

բ. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (IAS).

գ. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների մեկնաբանությունների կոմիտեի մեկնաբանությունները (IFRIC).

դ. Մեկնաբանությունների մշտական կոմիտեի մեկնաբանությունները (SIC).

4) Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներ՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները (այսուհետ՝ հայեցակարգային հիմունքներ).

5) փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ)։

6) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն՝ կազմակերպություն՝

ա. որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքում արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ կամ հաշվետու թողարկող, բացառությամբ արժեթղթերի հրապարակային առաջարկ կատարող անձ կամ հաշվետու թողարկող հանդիսացող Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը, կամ

բ. որը հանդիսանում է բանկ, վարկային կազմակերպություն, վճարահաշվարկային կազմակերպություն, ներդրումային ընկերություն, կարգավորվող շուկայի օպերատոր, կենտրոնական դեպոզիտարիա, ապահովագրական ընկերություն, վերաապահովագրական ընկերություն, ապահովագրական բրոքերային կազմակերպություն կամ ներդրումային ֆոնդի կառավարիչ։

7) խոշոր կազմակերպություն՝ կազմակերպություն, որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

8) միջին կազմակերպություն՝ կազմակերպություն, որը չի հանդիսանում փոքր կամ միկրոկազմակերպություն և որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

9) փոքր կազմակերպություն՝ կազմակերպություն, որը չի հանդիսանում միկրո կազմակերպություն և որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ երկու միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ չորս միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ հարյուր.

10) միկրո կազմակերպություն՝ կազմակերպություն, որը հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ չի գերազանցել հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ հարյուր յոթանասունհինգ միլիոն դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ երեք հարյուր հիսուն միլիոն դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ տասը.

11) խումբ՝ մայր կազմակերպությունը և իր դուստր կազմակերպությունները.

12) մայր կազմակերպություն՝ կազմակերպություն, որը վերահսկում է մեկ կամ ավելի դուստր կազմակերպությունների.

13) դուստր կազմակերպություն՝ կազմակերպություն, որը վերահսկվում է մեկ այլ կազմակերպության կողմից.

14) խոշոր խումբ՝ խումբ, որը մայր կազմակերպության հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ համախմբման հիմունքով գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

15) միջին խումբ՝ խումբ, որը չի հանդիսանում փոքր խումբ, և որը մայր կազմակերպության հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի

դրությամբ համախմբման հիմունքով չի գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ տասը միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ քսան միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ երկու հարյուր հիսուն.

16) փոքր խումբ՝ խումբ, որը մայր կազմակերպության հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ համախմբման հիմունքով չի գերազանցել է հետևյալ երեք ցուցանիշներից առնվազն երկուսը.

ա. ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (հաշվեկշռի) ընդհանուր գումարը՝ երկու միլիարդ դրամ.

բ. գործունեությունից հասույթը՝ չորս միլիարդ դրամ.

գ. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից սահմանված կարգով հաշվարկված աշխատողների միջին տարեկան թվաքանակը՝ հարյուր.

17) փորձագետ հաշվապահ՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի փորձագետ հաշվապահի որակավորում.

18) աուդիտոր՝ ինչպես սահմանված է «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

19) պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրք (այսուհետ՝ Մասնագիտական էթիկայի կանոնագիրք)՝ ինչպես սահմանված է «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

20) մասնագիտացված կառույց՝ ինչպես սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

2. Որպես այլընտրանք, սույն հոդվածի 1-ին մասի 14-16-րդ կետերի «ա» և «բ» ենթակետերով նշված ցուցանիշները կարելի է հաշվարկել ոչ թե համախմբման հիմունքով, այլ համապատասխան ցուցանիշների թվաքանակն գումարման միջոցով: Այս դեպքում «ա» և «բ» ենթակետերով նշված ցուցանիշների սահմանաչափերը համապատասխանաբար ավելանում են քսան տոկոսով:

Հոդված 4. Հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը

1. Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը (այսուհետ՝ քաղաքականություն իրականացնող

մարմին) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

2. Բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերներային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների համար հաշվապահական հաշվառման ոլորտում կարգավորման գործառույթներ իրականացնող մարմինը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է՝ քաղաքականություն իրականացնող մարմնի հետ՝ համատեղ:

Հոդված 5. Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը

1. Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝

1) սույն օրենքը.

2) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

3) ամբողջական ՖՀՄՍ-ները և հայեցակարգային հիմունքները.

4) ամբողջական ՖՀՄՍ-ների հիման վրա մշակված՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները.

5) հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր:

2. Միջին կազմակերպությունների և փոքր կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝

1) սույն օրենքը.

2) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

3) ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն.

4) ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի հիման վրա մշակված՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը, ինչպես նաև ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները.

5) հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտեր:

3. Միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝

1) սույն օրենքը.

2) միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկը.

3) միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկի հիման վրա մշակված՝ միկրո կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը:

4. Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար միջին կազմակերպությունները և փոքր կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են կիրառել սույն հոդվածի 1-ին մասով նշված իրավական ակտերը, իսկ 3-րդ մասում նշված իրավական ակտերը չեն կարող կիրառել:

5. Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները չեն կարող կիրառել սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված իրավական ակտերը:

6. Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու համար միկրո կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կարող են կիրառել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված իրավական ակտերը:

7. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կազմակերպությունները ամբողջական ՖՀՄՍ-ները և հայեցակարգային հիմունքները պարտավոր են կիրառել Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից սահմանված ժամկետներում՝ անկախ վերջիններիս հայերեն թարգմանված լինելու հանգամանքից:

Հոդված 6. Հաշվապահական հաշվառման կարգավորումը

1. «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Հանրային վերահսկողության խորհուրդը (այսուհետ՝ Հանրային վերահսկողության խորհուրդ) ապահովում է հետևյալ իրավական ակտերի նախագծերի մշակումը՝

1) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը.

2) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները.

3) միջին կազմակերպությունների և փոքր կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը.

4) միջին կազմակերպությունների և փոքր կազմակերպությունների ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները.

5) միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկը.

6) միկրո կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանը և հաշվային պլանի կիրառման հրահանգը.

7) սույն օրենքով նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտեր:

2. Հանրային վերահսկողության խորհուրդն ապահովում է ամբողջական ՖՀՄՍ-ների, հայեցակարգային հիմունքների, ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի, ինչպես նաև դրանցում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների թարգմանությունն ու դրանց պաշտոնական հրապարակումը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասում նշված իրավական ակտերը ուժի մեջ են մտնում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՄԸ

Հոդված 7. Հաշվապահական հաշվառման վարումը

1. Բոլոր կազմակերպությունները (ներառյալ՝ անվճարունակության կամ լուծարման գործընթացում գտնվողները) պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում:

2. Կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով, եթե Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ նախորդ տարվա համախառն եկամտի չափը գերազանցել է 500 մլն դրամը:

3. Սույն հոդվածում նշված համակարգչային ծրագրերի՝ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները չեն վերաբերում բանկերին, վարկային կազմակերպություններին, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպություններին, վճարահաշվարկային կազմակերպություններին, կարգավորվող շուկայի

օպերատորին, կենտրոնական դեպոզիտարիային, վերաապահովագրական ընկերություններին, ապահովագրական բրոքերային կազմակերպություններին, ներդրումային ֆոնդի կառավարիչներին,

ապահովագրական ընկերություններին և ներդրումային ընկերություններին, որոնց մոտ հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգերի ներդրման պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

5. Կազմակերպության հաշվապահական հաշվառումը վարվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների պահպանմամբ:

Հոդված 8. Կազմակերպության ղեկավարության իրավունքները և պարտականությունները հաշվապահական հաշվառման կազմակերպման գործում

1. Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու և ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու համար:

2. Սույն օրենքի իմաստով, կազմակերպության ղեկավարություն է համարվում գործադիր մարմնի ղեկավարը, լուծարվող կազմակերպության անվճարունակության կառավարիչը, արտաքին կառավարիչը, անհատ լուծարողը, լուծարային հանձնաժողովի նախագահը (այսուհետ՝ կազմակերպության ղեկավար), ինչպես նաև կազմակերպության կանոնադրությամբ կամ ներքին իրավական ակտերով կամ այլ իրավական ակտերով նախատեսված այլ մարմիններ և անձինք:

3. Կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է՝

- 1) կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով.
- 2) կազմակերպության աշխատողը համարվող հաշվապահի միջոցով.
- 3) հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցով.

4) կազմակերպության ղեկավարի կողմից՝ անձամբ:

4. Կազմակերպության ղեկավարը սահմանում է կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, եթե այդ իրավասությունը օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված չէ կառավարման այլ մարմնին:

Հոդված 9. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները

1. Կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը, իսկ հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով հաշվապահական հաշվառումը վարելու դեպքում՝ այդ կազմակերպության լիազորած անձը

կամ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված այլ անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

2. Գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվությունները ժամանակին պատրաստելու համար:

3. Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար:

4. Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

Հոդված 10. Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպության, խոշոր և միջին կազմակերպության գլխավոր հաշվապահը

1. Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություններում, ~~բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի,~~ խոշոր կազմակերպություններում և միջին կազմակերպություններում գլխավոր հաշվապահ կարող են աշխատել միայն փորձագետ հաշվապահները և աուդիտորները: Այն դեպքում, երբ հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունում, խոշոր կազմակերպությունում և միջին կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է մասնագիտացված կազմակերպության կողմից, ապա վերջինիս կողմից գլխավոր հաշվապահի գործառնություններն իրականացնող լիազորված անձը ևս պետք է լինի փորձագետ հաշվապահ կամ աուդիտոր:

2. Փորձագետ հաշվապահները պարտավոր են պահպանել Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջները:

3. Բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարչի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների և ապահովագրական բրոքերային կազմակերպությունների գլխավոր հաշվապահ աշխատելու համար, հ լրումն սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների, ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել լրացուցիչ պահանջներ կարող է աշխատել ~~ՀՀ կենտրոնական բանկի սահմանած պահանջներին համապատասխան որակավորում ունեցող գլխավոր հաշվապահը:~~

Հոդված 11. Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոնները

1. Հաշվապահական հաշվառումը վարվում է՝

1) կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիման վրա.

2) անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև նրա գործունեության դադարեցման գրանցման համար դիմումը պետական ռեգիստր մուտքագրելու օրը:

2. Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառման տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:

Հոդված 12. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը

1. Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը: Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները նույնականացնող անհրաժեշտ վավերապայմաններ:

2. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր վավերապայմանները.

ա) փաստաթղթի անվանումը.

բ) հերթական համարը.

գ) կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

դ) գործառնության մասնակիցների (մասնակցի) անվանումը (անունը, ազգանունը).

ե) տնտեսական գործառնության բովանդակությունը.

զ) տնտեսական գործառնության չափման միավորները՝ դրամական և բնաիրային արտահայտությամբ.

է) պատասխանատու անձանց պաշտոնները և նրանց ստորագրությունները:

Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերում կարող են ներառվել լրացուցիչ վավերապայմաններ՝ կախված գործառնության բնույթից և տվյալների մշակման համակարգից: Լրացուցիչ վավերապայմանները կարող են սահմանել Հանրային վերահսկողության խորհուրդը և (կամ) կազմակերպությունը:

3. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

4. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք:

5. Սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքվում և համակարգվում է հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում՝ ժամանակագրական կարգով:

6. Հանրային վերահսկողության խորհուրդը կարող է սահմանել սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի ձևեր:

Հոդված 13. Ստորագրության իրավունքը հաշվապահական հաշվառման փաստաթղթերում

1. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարությունը, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

Հոդված 14. Ակտիվների և պարտավորությունների գույքագրումը

1. Հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ պատրաստող կազմակերպությունները տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու նպատակով պարտադիր անցկացնում են ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Պարտադիր գույքագրման անցկացման կարգը սահմանում է Հանրային վերահսկողության խորհուրդը:

2. Բացի սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքից, գույքագրման օբյեկտների կազմը և գույքագրման անցկացման կարգը որոշում է կազմակերպության ղեկավարը:

Հոդված 15. Հաշվապահական տեղեկատվության գաղտնիությունը

1. Սկզբնական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար պատրաստված հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը համարվում է առևտրային գաղտնիք, որին կարելի է ծանոթանալ օրենքով կամ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով, ներքին իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

2. Առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությանը ծանոթացած անձինք և կազմակերպությունները պարտավոր են պահպանել դրա գաղտնիությունը: Առևտրային գաղտնիքն ապօրինի հրապարակելու դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան:

3. Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը առևտրային գաղտնիք չի համարվում:

Հոդված 16. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը

1. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերում և էլեկտրոնային կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը կազմակերպության կողմից պահպանվում են օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի ժամկետով:

2. Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի առգրավումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Կազմակերպությունն իրավունք ունի առգրավված փաստաթղթերը կրկնօրինակել և պահել իր մոտ:

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 17. Փորձագետ հաշվապահների որակավորումը

1. Փորձագետ հաշվապահների որակավորումը սույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված պահանջներին բավարարող՝ փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի (այսուհետ՝ դիմող)՝ սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին բավարարման հավաստումն է (այսուհետ՝ որակավորում):

2. Որակավորումը տրվում է մասնագիտացված կառույցի կողմից: Որակավորումը տրվում է այն դիմողին, որը միաժամանակ՝

1) հանձնել է որակավորման քննությունները.

2) որակավորումը ստանալու համար դիմումներ կայացնելու պահին ունի բարձրագույն կրթություն.

3) որակավորումը ստանալու համար դիմումներ կայացնելու պահին ունի հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և (կամ) աուդիտորական գործունեության իրականացման հետ կապված երեք տարվա աշխատանքային փորձ: Աշխատանքային փորձին վերաբերող պահանջները սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

3. Որակավորման քննությունների ծրագիրը (այդ թվում քննական առարկաների կազմը) և քննությունների անցկացման կարգը հաստատում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ: Որակավորման քննությունները կազմակերպվում և անցկացվում են մասնագիտացված կառույցի կողմից:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը համարվում է բավարարված դիմողի կողմից քննական բոլոր առարկաների գծով քննությունները հանձնելու դեպքում: Մասնագիտացված կառույցի կողմից սահմանված և Հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցված

որակավորման քննություններից ազատման կարգի համաձայն դիմողը կարող է ազատվել որոշակի առարկաների գծով քննություններ հանձնելուց:

5. Որակավորում չտալու վերաբերյալ որոշում կայացվում է այն դեպքում, երբ դիմողը չի համապատասխանում սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

6. Փորձագետ հաշվապահը պարտավոր է որակավորում ստանալու տարվան հաջորդող տարվանից սկսած անցնել շարունակական մասնագիտական զարգացում, որի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ: Շարունակական մասնագիտական զարգացման տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 20 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար՝ 80 ժամից:

7. Սույն հոդվածի համաձայն որակավորում ստացած դիմողին մասնագիտացված կառույցի կողմից տրվում է որակավորման վկայական: Որակավորման վկայականի ձևը և տրման կարգը սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

Հոդված 18. Փորձագետ հաշվապահների որակավորման քննությունների կազմակերպումը

1. Փորձագետ հաշվապահների որակավորման քննություններն անցկացնում է մասնագիտացված կառույցի կողմից ստեղծված փորձագետ հաշվապահների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի անհատական կազմը և կանոնադրությունը հաստատում է մասնագիտացված կառույցը: Հանձնաժողովի կանոնադրությունը համաձայնեցվում է Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

2. Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը փոխհատուցելու նպատակով մասնագիտացված կառույցը դիմողից գանձում է վճար: Վճարի չափը սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

Հոդված 19. Դիմողին ներկայացվող պահանջները

1. Փորձագետ հաշվապահների որակավորման քննությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող այլ անձինք, ովքեր ունեն միջնակարգ կրթություն:

2. Փորձագետ հաշվապահների որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում այն անձին, ով՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատարանի վճռով զրկվել է ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից, բացառությամբ, եթե դատվածությունը հանված կամ մարված է:

Հոդված 20. Որակավորման ժամկետը

1. Որակավորումը տրվում է անժամկետ:

Հոդված 21. Որակավորման չեղարկման հիմքերը և կարգը

1. Որակավորումը չեղարկվում է այն դեպքերում, երբ՝

1) որակավորումը ստացվել է սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով կամ 19-րդ հոդվածով դիմողին ներկայացված պահանջների խախտմամբ.

2) ուժի մեջ է մտել դատարանի վճիռը, որը որպես պատիժ նախատեսում է որոշակի ժամկետով ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկում.

3) չեն պահպանվել սույն օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն.

4) փորձագետ հաշվապահը խուսափում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արտաքին գնահատման ենթարկվելուց կամ արտաքին գնահատման արդյունքներով ստացել է «5» գնահատական:

2. Որակավորման չեղարկման որոշումն ընդունվում է մասնագիտացված կառույցի կողմից:

3. Որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհրդին՝ չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

4. Բողոքարկման ընթացքում որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կասեցվում է: Բողոքարկման ընթացքում փորձագետ հաշվապահների՝ մասնագիտացված կառույցին անդամակցությունը համարվում է կասեցված: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկումը չբավարարելու դեպքում որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը մնում է անփոփոխ: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկումը բավարարելու

դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա մասնագիտացված կառույցը կայացնում է որակավորման չեղարկումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

5. Անձը, որի որակավորումը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չունի որակավորման քննությունների համար կրկին դիմել մասնագիտացված կառույցին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նախատեսված ժամկետի ընթացքում:

ԳԼՈՒԽ 4

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 22. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և կազմը

1. Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվություններ: Ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ամբողջական ՖՀՄՍ-ներով:

2. Խումբը, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է և խոշոր խմբերը ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ամբողջական ՖՀՄՍ-ներով:

3. Միջին կազմակերպությունները և փոքր կազմակերպությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվություններ: Ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով: Եթե միջին կազմակերպությունները և փոքր կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կիրառում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավական ակտերը, ապա ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն:

4. Միջին խմբերը և փոքր խմբերը ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմը սահմանված է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով: Եթե միջին խմբերը և փոքր խմբերն իրենց հայեցողությամբ կիրառում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավական ակտերը, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել ամբողջական ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն:

5. Միկրո կազմակերպությունները միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկի պահանջների համաձայն պարտավոր են պատրաստել ֆինանսական հաշվետվություններ: Ֆինանսական

հաշվետվությունների կազմը սահմանված է միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկով: Եթե միկրո կազմակերպություններն իրենց հայեցողությամբ կիրառում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերում նշված իրավական ակտերը, ապա ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են պատրաստել, համապատասխանաբար, ամբողջական ՖՀՄՍ-ների կամ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն:

Հոդված 23. Ֆինանսական հաշվետվությունների կազմմանը ներկայացվող պահանջները

1. Ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության ներկայացման վերաբերյալ պահանջները սահմանվում են՝

1) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների և խոշոր կազմակերպությունների, ինչպես նաև խմբի, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է և խոշոր խմբերի համար՝ ամբողջական ՖՀՄՍ-ներում.

2) միջին և փոքր կազմակերպությունների, ինչպես նաև միջին և փոքր խմբերի համար՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ում.

3) միկրո կազմակերպությունների համար՝ միկրո կազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկում:

2. Ֆինանսական հաշվետվություններն ստորագրում են կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը: Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված դեպքում ֆինանսական հաշվետվությունները կարող է ստորագրել միայն կազմակերպության ղեկավարը:

Հոդված 24. Հաշվետու ժամանակաշրջանը

1. Հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարին և միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանը:

2. Հաշվետու տարին տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանն է: Նոր ստեղծված կազմակերպությունների համար առաջին հաշվետու տարի է համարվում դրանց պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Հաշվետու տարվա համար պարտադիր կազմվում են տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Օրացուցային տարվա ընթացքում գործունեությունը առանց իրավահաջորդության դադարեցրած կազմակերպության համար վերջին հաշվետու տարի է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

3. Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանը հաշվետու տարուց փոքր ժամանակաշրջան է: Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի համար միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները

կազմվում են օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կամ կազմակերպությունների հայեցողությամբ:

Հոդված 25. Ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելը

1. Կազմակերպությունները և խմբերը ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են՝

1) մասնակիցներին (բաժնետերերին, փայտատերերին)՝ օրենքի, կազմակերպության կանոնադրության կամ ներքին կանոնակարգերի համաձայն.

2) օրենքով սահմանված դեպքերում պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ անձանց՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.

3) վարկատուներին, փոխատուներին, կազմակերպության մասնակցությամբ տնտեսական գործունեության մյուս կողմերին՝ կամավորության հիմունքներով:

2. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր է համարվում դրանց՝ ըստ պատկանելության հանձնելու, էլեկտրոնային եղանակով կամ փոստով ուղարկելու օրը:

3. Հաշվետվությունները փոստի միջոցով ներկայացնելու օր է համարվում փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արտատիպը, իսկ էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում՝ հաշվետվության ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան ծանուցման հիման վրա հաշվետվության ներկայացման օրը:

Հոդված 26. Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը

1. Ստորև ներկայացված կազմակերպությունների և խմբերի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի.

1) հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները.

2) միջին կազմակերպությունները.

3) խումբը, որի մայր կազմակերպությունը հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություն է և խոշոր խմբերը.

4) միջին խմբերը:

2. Բացի սույն հոդվածի 1-ին մասում թվարկված կազմակերպություններից և խմբերից, այլ օրենքով ևս կարող են սահմանել կազմակերպությունների և խմբերի տեսակներ, որոնց ֆինանսական հաշվետվություններն ենթակա են պարտադիր աուդիտի:

Հոդված 27. Ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնությունը

1. Բոլոր կազմակերպությունները և խմբերը, բացի փոքր կազմակերպություններից և խմբերից ու միկրո կազմակերպություններից, պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել:

2. Կազմակերպությունները և խմբերը, որոնց տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հրապարակման, պարտավոր են դրանք հրապարակել մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը, իսկ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հրապարակելու պահանջ օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

3. Բանկերը, վարկային կազմակերպությունները, գրավատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողները, կարգավորվող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, ապահովագրական ընկերությունները, վերաապահովագրական ընկերությունները, ապահովագրական բրոքերային կազմակերպությունները, ներդրումային ֆոնդերի կառավարիչներն իրենց ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են համապատասխանաբար՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին», «Գրավատների և գրավատնային գործունեության մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և ժամկետներում:

4. Սույն օրենքով և այլ օրենքներով աուդիտի ենթակա կազմակերպությունները և խմբերը (խմբի մայր կազմակերպությունը) պարտավոր են տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակել միայն աուդիտի ենթարկվելուց հետո: Սնանկության վարույթում գտնվող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները կարող են աուդիտի չենթարկվել:

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված կազմակերպությունների և խմբերի ֆինանսական հաշվետվությունները ենթակա են հրապարակման աուդիտորական եզրակացության հետ: Առանց աուդիտորական եզրակացության, ինչպես նաև ոչ ամբողջական կազմով հրապարակված ֆինանսական հաշվետվությունները համարվում են չհրապարակված:

6. Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշվետվությունների պատկերամուտները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում, <http://www.azdarar.am> հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում: Ընդ որում, եթե կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները հրապարակել է իր ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում, ապա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային

կայքի հղումը (հասցեն) պարտավոր է հրապարակել նաև <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Ֆինանսական հաշվետվությունները հրապարակումից հետո առնվազն 5 տարի պետք է պահպանվեն այն կայքում, որտեղ դրանք հրապարակվել են:

7. Կազմակերպություններն իրենց օրենքով հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակը կամ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով սահմանված ժամկետները լրանալուց հետո տրամադրում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ այդ մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձի դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 28. Պատասխանատվությունը հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար

1. Կազմակերպության ղեկավարը և հաշվապահական հաշվառման կազմակերպման ու վարման համար պատասխանատու այլ անձինք հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջները խախտելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:

Հոդված 29. Անցումային դրույթներ

1. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն տրված հաշվապահի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից դրանց ժամկետը երկարաձգվում է մինչև 2023 թվականի հունվարի 1-ը, եթե սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին այդ վկայականները հանդիսանում են գործող:

2. Եթե «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն տրված հաշվապահի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո, ապա այդ վկայականները շարունակում են ուժի մեջ մնալ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը:

3. Սույն հոդվածի 1-ին, ~~4~~-2-րդ և 8-րդ մասերով նախատեսված վկայականները հիմք են հանդիսանում որպես փորձագետ հաշվապահ մասնագիտացված կառույցին անդամակցելու համար:

4. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն, ինչպես նաև սույն հոդվածի 8-րդ մասով

Նախատեսված հաշվապահի որակավորման վկայական ունեցող հաշվապահները իրավունք ունեն մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը մասնագիտացված կառույցի կողմից սահմանված պարզեցված կարգով ստանալ սույն օրենքով նախատեսված փորձագետ հաշվապահի որակավորման վկայական:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված մասնագիտացված կառույցի անդամը, ով ունի այդ մասնագիտացված կառույցի կողմից տրված հաշվապահի որակավորման վկայագիր, սույն օրենքով նախատեսված մասնագիտացված կառույցի կողմից սահմանված կարգով կարող է այդ վկայագիրը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը փոխարինել սույն օրենքով նախատեսված փորձագետ հաշվապահի որակավորման վկայականով:

6. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերը մնում են ուժի մեջ այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքի դրույթներին:

7. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքի համաձայն հաշվապահների որակավորման քննությանը մասնակցելու համար մինչև սույն օրենքով նախատեսված առաջին մասնագիտացված կառույցի հավատարմագրումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն դիմած դիմողների որակավորման քննություններն անցկացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 1048-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման կարգին համապատասխան:

8. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին գործող հանդիսացող՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարչի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի և ապահովագրական բրոքերային կազմակերպությունների հաշվապահի որակավորման վկայականների գործողության ժամկետը մինչև 2023 թվականի հունվարի 1-ը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրանց ժամկետը երկարաձգվում է մինչև 2023 թվականի հունվարի 1-ը: Եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված վերը նշված՝ հաշվապահի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո, ապա այդ վկայականները շարունակում են ուժի մեջ մնալ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը:

Հոդված 30. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն օրենքը:

—[Կառավարություն](#)

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Կ-116-25.04.2019,25.09.2019-ՖՎ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	Նախագծերի տեքստերում	«Հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություններ» հասկացությունը փոխարինվել է «Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություններ» հասկացությամբ	Ընդունվել է: Փոփոխության նպատակը նշված խմբի կազմակերպությունների կարգավիճակն ավելի ակնառու դարձնելն է:	Ընդունվել է:
2	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	3-րդ հոդված 6-րդ կետի բ ենթակետ.	Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունները, ինչպես նաև շուկայում գերիշխող դիրք ունեցողները ևս պետք է ներառվեն այս խմբում, քանի որ, օրինակ՝ ներդրումային	Չի ընդունվել: Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունները որպես հանրային հաշվետվողականություն ունեցող դիտարկելու	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>ընկերություններից առավել դրանք են առաջին հերթին հանրային հաշվետվողականություն ունեցող ընկերությունները:</p>	<p>գաղափարին դեմ չենք, սակայն կարծում ենք, որ նման ծառայություններ մատուցող մեծ ընկերությունները այս օրենքի նախագծի շրջանակներում կրավարարեն առնվազն միջին կազմակերպության դասակարգմանը և, հետևաբար, ֆինանսական հաշվետվությունների հրապարակման և պարտադիր աուդիտի պահանջները կտարածվեն նաև այդ կազմակերպությունների վրա: Այնուամենայնիվ, եթե խոսքը վերաբերում է բոլոր հանրային ծառայություններ մատուցողներին (փոքր ՋՐԷԿ, ինտերնետային սպասարկմամբ զբաղվող փոքր ընկերություն և այլն), ապա անհրաժեշտ կլինի լրացուցիչ քննարկումներ իրականացնել Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				<p>հետ՝ այդ կազմակերպությունների շրջանակը և ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի հետ կապված գործող կարգավորումները հասկանալու համար:</p> <p>Ինչ վերաբերում է շուկայում գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններին, ապա եթե շուկան իր ծավալներով փոքր չէ (օրինակ տարեկան 4 մլրդ դրամից), ապա, ըստ էության, այդ շուկայում գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը այս օրենքի շրջանակներում կդասակարգվի առնվազն որպես միջին կազմակերպություն և պարտավոր կլինի հրապարակել և աուդիտի ենթարկել իր ֆինանսական հաշվետվությունները: Միաժամանակ, ՀՀ ՏՄՊՊՀ 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 194-Ն որոշմամբ հաստատվել է նաև</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի որոշման կարգը, որի համաձայն գերիշխող դիրքը որոշելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք գնահատումներ, ինչը կարող է դժվարացնել օրենքի համապատասխան դրույթի կիրառումը: Միաժամանակ, դրույթի կիրառման նպատակով անհրաժեշտություն կառաջանա, որպեսզի ՏՄՊԴՀ-ն յուրաքանչյուր տարի գնահատի ՀՀ-ում գործող բոլոր շուկաները:	
3	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	3-րդ հոդվածի 7-րդ կետ.	Խոշոր, միջին և փոքր ընկերությունների դասակարգումը կնկնում է Եվրամիության կողմից սահմանված չափանիշները, այնինչ դրա անդամ ամենաաղքատ երկրից ՀՀ-ն առնվազն կրկնակի աղքատ է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով: Ավելին, նույնիսկ փոքր ընկերությունների համար սահմանվել է 100 աշխատակցի	Չի ընդունվել: Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է նաև պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>պայմանական շեն, այն դեպքում, երբ Եվրամիությունում այդ չափանիշը 50 է:</p> <p>Այս առումով հետաքրքիր է իմանալ, թե Կառավարության գնահատականով ՀՀ-ում տնտեսավարող սուբյեկտներից քանի՞սն են համապատասխանելու խոշորի, միջինի, փոքրի և միկրոյի չափանիշներին:</p> <p>Կարծում ենք, որ չափանիշները պետք է կրկնակի պակասեցնել:</p> <p>Առաջարկում ենք նաև գերխոշորների խումբ առանձնացնել, որի համար սահմանել 500 աշխատակցի, ինչպես նաև ակտիվների և հասույթի համար համապատասխանաբար 50 և 100 միլիարդ դրամի շեն: Այս խմբի համար պետք է կիրառվեն ամենախիստ պահանջները:</p>	<p>շրջանակի ճշգրտման անհրաժեշտությամբ՝ ներկայումս գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերություններ ներգրավելուն:</p> <p>Ներկայումս տարբեր օրենքներով պարտադիր աուդիտի է ենթակա շուրջ 1,200 կազմակերպություն, որոնց գրեթե կեսը որևէ գործունեություն չիրականացնող բաց բաժնետիրական ընկերություններ են:</p> <p>Միաժամանակ, մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը պարտադիր աուդիտի պահանջ սահմանված է եղել նաև «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի իմաստով խոշոր համարվող կազմակերպությունների համար: Սակայն, տնտեսավարող սուբյեկտների</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				<p>և մասնագիտական հանրության կողմից արտաքին աուդիտի որակի վերաբերյալ ներկայացված մի շարք մտահոգությունների արդյունքում 2014 թվականի մայիսին հանվեց խոշոր կազմակերպությունների աուդիտի ենթարկվելու պարտադիր պահանջը:</p> <p>Հետևաբար, օրենքի նախագծում առկա սահմանաչափերի նվազեցման պարագայում կարող է ռիսկ առաջանալ, որ նորից ի հայտ կգան աուդիտորական կազմակերպություններ, որոնք ոչ բարեխիղճ վարքագիծ կդրսևորեն:</p> <p>Մեր գնահատմամբ կազմակերպությունների թվաքանակը հետևյալն է՝</p> <p>Միջին կազմակերպություններ – շուրջ 230</p> <p>Խոշոր կազմակերպություն-</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				<p>ներ – շուրջ 80</p> <p>ՀՀ-ում գրանցված մնացած կազմակերպությունները սույն օրենքների նախագծերի իմաստով կդասակարգվեն որպես փոքր կամ միկրո կազմակերպություններ:</p> <p>Ինչ վերաբերում է գերխոշոր կազմակերպությունների խումբ սահմանելուն և ամենախիստ պահանջները նրանց նկատմամբ սահմանելուն, ապա հայտնում ենք, որ օրենքների փաթեթով միջին կազմակերպություններից սկսած բոլոր կազմակերպությունները ենթարկվում են միևնույն խիստ կարգավորումների, օրինակ՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը, աուդիտի ենթարկելը, որակավորված գլխավոր հաշվապահ ունենալը և այլն:</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	3-րդ հոդվածի 9-րդ կետի գ ենթակետ.	Ինչու՞ է 100, եթե եվրոպայում 50 է:	Չի ընդունվել: Ցուցանիշը փոփոխվել է հանրային քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկությունների հիման վրա: Տես նաև 1-ին առաջարկության մեկնաբանությունը:	Չի ընդունվել:
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	7-րդ հոդվածի 4-րդ կետ.	Հավանաբար պետք է ներառի սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կազմակերպությունները: Ինչու՞ չկա, ասենք, ներդրումային ֆոնդի կառավարիչը: Այս հարցով ԿԲ-ից ասացին, որ վրիպակ է ու փոփոխված տեքստի հետ կապված կտեղեկացնեն ԱԺ-ին:	Չի ընդունվել: ԿԲ կողմից առաջարկվող նոր խմբագրություն չի ներկայացվել:	Չի ընդունվել:
6	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	10-րդ հոդվածի 1-ին մաս	Մասում «կարող են աշխատել» բառերից հետո ավելացնել «միայն» բառը՝ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	17-րդ հոդված	ՇՄՁ տևողության նկատմամբ	Ընդունվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		6-րդ մաս	պահանջը համապատասխանեցնել ԵԱՏՄ անդամ երկրների միջև կնքվող առուփտի համաձայնագրի պահանջներին՝ այն է, 1 տարվա ընթացքում առնվազն 40 ժամ տևողությամբ ՇՄՁ անցնելու պահանջը փոխարինել 2 տարվա ընթացքում առնվազն 80 ժամ տևողությամբ ՇՄՁ անցնելու պահանջով, բայց ոչ պակաս քան 20 ժամ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար:	Նախագիծը խմբագրվել է:	
8	ՀՀ կառավարություն	18-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՎԽ հետ համաձայնեցվելու է որակավորման քննություններ անցկացնող որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը, որակավորման հանձնաժողովի անհատական կազմը ՀՎԽ հետ համաձայնեցնելու անհրաժեշտություն չկա:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
9	ՀՀ կառավարություն	21-րդ հոդվածի	3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «չի պահպանվել	Ընդունվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		1-ին մասի 3-րդ կետ	սույն օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն»	Նախկին խմբագրությամբ ՇՄՁ պահանջները չկատարելու դեպքերը հարգելի էին ճանաչվում մասնագիտացված կառույցի կողմից, ինչը կարող էր առաջացնել տարաբնույթ ռիսկեր: Առաջարկվող խմբագրությամբ ՇՄՁ պահանջները չկատարելու դեպքերը հարգելի կհամարվեն աուդիտորների և փորձագետ հաշվապահների ՇՄՁ կարգով, որը մշակվում է մասնագիտացված կառույցի կողմից և համաձայնեցվում ՀՎԽ հետ:	
10	ՀՀ կառավարություն	27-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախատեսել դրույթ առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները հրապարակումից հետո առնվազն 5 տարի պետք է պահպանվեն այն կայքում, որտեղ դրանք հրապարակվել են	Ընդունվել է: Նշված դրույթի նախատեսումը պայմանավորված է այն ռիսկի առկայությամբ, որ կազմակերպությունները կարող են հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները և անմիջապես կամ որոշ ժամանակ	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				անց հանել հրապարակման կայքից:	
11	ՀՀ ԱԺ պատգամավոր Վահագն Թևոսյան	27-րդ հոդվածի 6-րդ մաս	<p>6-րդ մասում՝</p> <ol style="list-style-type: none"> 1. «պաշտոնական ինտերնետային կայքում» բառերից հետո լրացնել «կամ տպագիր մամուլում» բառերով: 2. «հրապարակել է իր ինտերնետային կայքում» բառերից հետո լրացնել «կամ տպագիր մամուլում,» բառերով: 3. «հղումը (հասցեն)» բառերից հետո լրացնել «կամ տպագիր մամուլի անունը, թողարկման համարը և ամսաթիվը» բառերով: <p>Գործող «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել մամուլում, ինտերնետով կամ տարածվել գրքույկների ձևով: «Հաշվապահական հաշ-</p>	<p>Ընդունվել է մասնակի:</p> <p>Օրենքի նախագծի 27-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվել է, որ կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշվետվությունների պատկերամուտները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում կամ http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական</p>	Ընդունվել է մասնակի:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>վառման մասին» ՀՀ օրենքի նախագծով տպագիր մամուլը այլևս չի հանդիսանա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման միջոց: Տպագիր լրատվամիջոցների բացառումը, որպես ֆինանսական հաշվետվությունների հրապարակման տարբերակ, զրկում է մամուլին տնտեսական մրցակցության հնարավորությունից, ինչպես նաև եկամտի հավելյալ աղբյուրից, ինչը վտանգում է լրատվամիջոցների ֆինանսական անկախությանը: Կարևոր է արձանագրել, որ պետական կայք հանդիսացող http://www.azdarar.am -ը ծանուցումներն անվճար չի տեղադրում, ավելին՝ շուկայական գներից ավելի թանկ է մատուցում ծառայությունը: Սա կարող է դիտարկվել որպես մենաշնորհային դիրքի չարաշահում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թերևս կարևորվում է բոլոր հայտարարությունների մեկտեղումը մեկ վայրում, այնուամենայնիվ</p>	<p>ինտերնետային կայքին նշված ձևակերպմամբ որևէ մենաշնորհ չի տրամադրվել, քանի որ կազմակերպությունները վերը նշված կայքից բացի, հնարավորություն ունեն ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև իրենց ինտերնետային կայքերում:</p> <p>Միաժամանակ, կարծում ենք, որ տպագիր մամուլում ֆինանսական հաշվետվությունները հրապարակելը գործնականում իրատեսական չէ, քանի որ ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը սովորաբար կազմում է միջինում շուրջ 60 էջ: Նշվածը հաշվի առնելով, առաջարկի հիման վրա</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>նկատելի է նաև, որ գործադիրը համաձայն է http://www.azdarar.am -ում տեղադրել միայն հղումներ, եթե հաշվետվությունները տպագրված են հաշվետու սուբյեկտի կայքում: Ըստ այդմ առաջարկում են նույն սկզբունքով հնարավորություն տալ http://www.azdarar.am -ում հրապարակել միայն տպագիր լրատվամիջոցի անունը, թողարկման համարն ու ամսաթիվը, եթե հաշվետվությունը տպագրվել է տպագիր մամուլում: Անհրաժեշտության դեպքում, այդ տեղեկությունն օգտագործելով, անհրաժեշտ հաշվետվությունը հնարավոր կլինի գտնել Ազգային արխիվում:</p>	<p>Օրենքի նախագծի 27-րդ հոդվածի 6-րդ մասը խմբագրվել է հետևյալ կերպ.</p> <p>«6. Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշվետվությունների պատկերամուտները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում, http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կամ <u>Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում</u>: Ընդ որում, եթե կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				<p>հրապարակել է իր ինտերնետային կայքում կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում, ապա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) պարտավոր է հրապարակել նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:»</p>	
12	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	27-րդ հոդվածի 7-րդ մաս.	Պետք է սահմանել 3 աշխատանքային օր: 10 օրը շատ երկար ժամկետ է կայքին հղումը տրամադրելու կամ ֆայլն էլեկտրոնային կրիչով փոխանցելու համար:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
13	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում տարբեր կարգավորումներին առնչվող անցումային ժամկետները	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է,	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			հետաձգել 1 տարով	քանի որ անցումային դրույթներում ներկայումս նախատեսված ժամկետները սահմանվել էին նախորդ տարվա սեպտեմբերին, երբ ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց օրենքների նախագծերի փաթեթը և ներկայացրեց ՀՀ ԱԺ քննարկման: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել 1 տարով հետաձգել ժամկետները:	
14	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում նախատեսել նոր մաս ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի կողմից տրամադրված հաշվապահների որակավորման վկայագրեր ունեցող անձանց համար առ այն, որ այդ վկայագրերը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը դիմելու դեպքում կփոխարինվեն փորձագետ հաշվապահի որակավորման	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			վկայականով:		
15	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում նախատեսել նոր մաս, որով ՀՀ ֆինանսների նախարարությանը հնարավորություն կընձեռվի ընթացք տալ հաշվապահի որակավորում ստանալու համար ներկայացված այն բոլոր դիմումներին, որոնք կստացվեն մինչև օրենքի նախագծով նախատեսված առաջին մասնագիտացված կառույցի հավատարմագրումը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
16	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մաս, 7-րդ հոդվածի 4-րդ մաս, 17-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասեր, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ	Կատարել տեխնիկական և խմբագրական բնույթի շտկումներ:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		մասեր, 19-րդ հոդվածի 2-րդ մաս, 21-րդ հոդվածի 1-ին մաս, 29-րդ հոդվածի 1-ին մաս			
17	ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	10-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախատեսել, որ ֆինանսական կազմակերպությունների գլխավոր հաշվապահ աշխատելու համար, ի լրումն փորձագետ հաշվապահ կամ աուդիտոր լինելու պահանջի, ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել նաև լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև անցումային դրույթ սահմանել այն անձանց համար, ովքեր օրենքն ուժի մեջ մտնելու պահին կունենան ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված հաշվապահի որակավորում	Ընդունել է : Համապատասխանաբար փոփոխվել են Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 29-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, ինչպես նաև 29-րդ հոդվածում նախատեսվել է նոր 8-րդ մաս	Ընդունել է :
18	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ	Կատարել խմբագրական բնույթի շտկումներ 3-րդ հոդվածի 1-ին	Ընդունվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		կետում, 4-րդ հոդվածի 2-րդ մասում, 7-րդ հոդվածի 4-րդ մասում, 27-րդ հոդվածի 3-րդ մասում	մասի 3-րդ կետում, 4-րդ հոդվածի 2-րդ մասում, 7-րդ հոդվածի 4-րդ մասում, 27-րդ հոդվածի 3-րդ մասում	Նախագիծը խմբագրվել է:	
«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աուդիտորական կազմակերպությունները պարտավոր են ԱՄՍ-ներին համապատասխան իրականացնել աուդիտի փաստաթղթավորում, ինչպես նաև ՀՎԽ կողմից ապահովվելու է աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ որակի հսկողության արտաքին գնահատման իրականացման ընթացակարգերի մշակումը և հաստատումը, որով մանրամասն ներկայացվելու են աուդիտորական կազմակերպությունների կողմից անցկացվող աուդիտի որակի ստուգման նկատմամբ բոլոր պահանջները, առաջարկվում է	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			հանել աուդիտորական կազմակերպությունների պարտավորությունը՝ վարելու իր կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյանը:		
2	ՀՀ կառավարություն	25-րդ հոդվածի 6-րդ մաս	ՇՄՁ տևողության նկատմամբ պահանջը համապատասխանեցնել ԵԱՏՄ անդամ երկրների միջև կնքվող աուդիտի համաձայնագրի պահանջներին՝ այն է, 1 տարվա ընթացքում առնվազն 40 ժամ տևողությամբ ՇՄՁ անցնելու պահանջը փոխարինել 2 տարվա ընթացքում առնվազն 80 ժամ տևողությամբ ՇՄՁ անցնելու պահանջով, բայց ոչ պակաս քան 20 ժամ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	26-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՎԽ հետ համաձայնեցվելու է որակավորման քննություններ անցկացնող որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը, որակավորման հանձնաժողովի անհատական կազմը ՀՎԽ հետ համաձայ-	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			նեցնելու անհրաժեշտություն չկա:		
4	ՀՀ կառավարություն	29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «չեն պահպանվել սույն օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն»	Ընդունվել է: Նախկին խմբագրությամբ ՇՄՁ պահանջները չկատարելու դեպքերը հարգելի էին ճանաչվում մասնագիտացված կառույցի կողմից, ինչը կարող էր առաջացնել տարաբնույթ ռիսկեր: Առաջարկվող խմբագրությամբ ՇՄՁ պահանջները չկատարելու դեպքերը հարգելի կհամարվեն աուդիտորների և փորձագետ հաշվապահների ՇՄՁ կարգով, որը մշակվում է մասնագիտացված կառույցի կողմից և համաձայնեցվում ՀՎԽ հետ:	Ընդունվել է:
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	30-րդ հոդված	Ավելացնել 6-րդ մաս. «սույն օրենքի հոդված 21-ի 6-րդ մասը կիրառվում է օրենքն ընդունելուց հետո մատուցած աուդիտորական ծառայությունների նկատմամբ:»:	Չի ընդունվել: Առաջարկը չի ընդունվել, քանի որ աուդիտորական կազմակերպությունները կարող են կնքել նաև շարունակական աուդիտի պայ-	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			Քանի որ մինչև սույն օրենքի ընդունումը աուդիտորական կազմակերպությունների կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների համապատասխանությունը գործող օրենքին իրականացվում էր ՀՀ Ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից:	մանագրեր, որոնք կարող են ընդգրկել մի քանի հաշվետու ժամանակաշրջանների աուդիտ: Ինչ վերաբերում է ներկայումս աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակի հսկողության իրականացմանը, հայտնում ենք, որ նման հսկողություն շուրջ 1 տարի է չի իրականացվում, քանի որ տեսչական բարեփոխումների շրջանակներում համապատասխան տեսչությունը լուծարվել է:	
6	ՀՀ կառավարություն	30-րդ հոդված	Անցումային դրույթներում տարբեր կարգավորումներին առնչվող անցումային ժամկետները հետաձգել 1 տարով	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է, քանի որ անցումային դրույթներում ներկայումս նախատեսված ժամկետները սահմանվել էին նախորդ տարվա սեպտեմբերին, երբ ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց օրենքների նախագծերի	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				փաթեթը և ներկայացրեց ՀՀ ԱԺ քննարկման: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել 1 տարով հետաձգել ժամկետները:	
7	ՀՀ կառավարություն	30-րդ հոդված	Անցումային դրույթներում նախատեսել նոր մաս ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի կողմից տրամադրված աուդիտորների որակավորման վկայագրեր ունեցող անձանց համար առ այն, որ այդ վկայագրերը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը դիմելու դեպքում կփոխարինվեն այս օրենքի իմաստով աուդիտորի որակավորման վկայականով	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
8	ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մաս	Անցումային դրույթներում սահմանել նորմ, որով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված աուդիտորի գործող որակավորում ունեցող անձանց հնարավորություն	Ընդունվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			կրնձեռվի մինչև 2023թ. հունվարի 1-ը պարզեցված կարգով անդամակցել մասնագիտացված կառույցին		
9	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մաս, 9-րդ հոդվածի 3-րդ մաս, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 21-րդ հոդվածի 5-րդ մաս, 25-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասեր, 26-րդ հոդվածի 1-ին մաս,	Կատարվել են տեխնիկական և խմբագրական բնույթի շտկումներ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		27-րդ հոդվածի 2-րդ մաս, 29-րդ հոդվածի 1-ին մաս, 30-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասեր			
«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին»					
ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետ	Սահմանումներում որպես գործող աուդիտոր համարել վերջին 3 տարում ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր աուդիտ իրականացրած անձին, այլ ոչ թե միայն պարտադիր աուդիտ իրականացրածին	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ	ՀՎԽ լիազորություններում նախատեսել, որ ՀՎԽ-ն ոչ միայն հաստատում է որակի հսկողության արտաքին գնահատման ընթացակարգերը, այլև	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			ապահովում է դրանց մշակումը		
3	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 3-րդ մասում	Կատարել խմբագրական բնույթի շտկում	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
4	ՀՀ կառավարություն	7-րդ հոդվածի 1-ին մաս	ՀՎԷՍ առաջին կազմի համար նախատեսել տարաժամկետ պաշտոնավարում՝ խուսափելու ՀՎԷՍ ամբողջ կազմի միաժամանակյա փոփոխությունից, իսկ հետագայում ՀՎԷՍ անդամները կնշանակվեն 5 տարի ժամկետով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	16-րդ հոդվածի 3-րդ մաս	3-րդ մասում ավելացնել նոր 4-րդ կետ. «Մասնագիտացված կառույցի խորհրդի նախագահը, գործադիր տնօրենը և որակի վերահսկողության ապահովման արտաքին գնահատում իրականացնող անձինք չեն կարող լինել սույն նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի բ, գ, ե ենթակետերի պահանջները բավարարող գործող աուդիտորները:»:	Չի ընդունվել: Անկախության վտանգին առնչվող հարցերը, կարծում ենք, պետք է առավելապես դիտարկվի Հանրային վերահսկողության խորհրդի դեպքում: Այնուամենայնիվ կարծում ենք, որ առաջարկվող սահմանափակումը կարելի է նախատեսել գլխավորապես արտաքին գնահատում	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			Մասնագիտացված կառույցի անկախությունը, օբյեկտիվությունը և անաչառությունը ապահովելու նպատակով:	իրականացնող անձանց համար՝ ՀՎԽ կողմից հաստատվելիք արտաքին գնահատման ընթացակարգերով:	
6	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 4-րդ մաս	4-րդ մասում նախատեսել, որ ՀՎԽ-ն սահմանում է փորձագետ հաշվապահների, աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում ներառվող տվյալների նվազագույն ցանկը:	Ընդունվել է: Փոփոխության առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ մասնագիտացված կառույցները կարող են ռեեստրում ներառել նաև լրացուցիչ տեղեկատվություն՝ ի լրումն ՀՎԽ կողմից սահմանված տեղեկատվության:	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	26-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծում հստակեցնել, որ մասնագիտացված կառույցի տարեկան գործունեության հաշվետվությունը հաստատվում է մասնագիտացված կառույցի կանոնադրությամբ սահմանված մարմնի կողմից	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
8	ՀՀ կառավարություն	27-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծում հստակեցնել, որ մասնագիտացված կառույցի անդամավճարների չափերը	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			հաստատվում են մասնագիտացված կառույցի կանոնադրությամբ սահմանված մարմնի կողմից		
9	ՀՀ կառավարություն	35-րդ հոդված	Անցումային դրույթներում հետաձգել ՀՎԽ և մասնագիտացված կառույցների ձևավորման համար սահմանված ժամկետները	Ընդունվել է: Նպատակը ՀՎԽ և մասնագիտացված կառույցների ձևավորման առավել խելամիտ ժամկետների սահմանումն է:	Ընդունվել է:
10	ՀՀ կառավարություն	35-րդ հոդված	Անցումային դրույթներում նախատեսել նոր մաս ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող, սակայն հաշվապահի կամ աուդիտորի որակավորման վկայական չունեցող անձանց համար առ այն, որ նրանց մինչև 2023 թվականի հունվարի 1-ը կտրամադրվի փորձագետ հաշվապահի որակավորման վկայական, իսկ մինչև այդ վկայականի ժամկետը լրանալը, նրանք իրավունք կունենան պարզեցված կարգով	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			ստանալ փորձագետ հաշվապահի որակավորման վկայական		
11	ՀՀ կառավարություն	36-րդ հոդված	Օրենքը ուժի մեջ մտնելու ամսաթիվ սահմանել 2020 թվականի հունվարի 1-ը	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
12	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ հոդվածի 1-ին մաս, 2-րդ մաս, 4-րդ մաս և 5-րդ մաս, 7-րդ հոդվածի 3-րդ մաս, 18-րդ հոդվածի 6-րդ մաս, 20-րդ հոդվածի 6-րդ մաս,	Կատարվել են տեխնիկական և խմբագրական բնույթի շտկումներ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		22-րդ հոդվածի 6-րդ մաս և 7-րդ մաս, 26-րդ հոդվածի 1-ին մաս և 2-րդ մաս, 33-րդ հոդվածի 2-րդ մաս և 3-րդ մաս, 35-րդ հոդվածի 2-րդ մաս, 3-րդ մաս և 5-րդ մաս			
«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Սահմանել, որ պարտադիր աուդիտի են ենթակա հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից տասը միլիոն և ավելի Հայաստանի	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Գործող նախագծով առկա էր ՀԿ-ների ֆինանսական	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			Հանրապետության դրամի չափով ֆինանսավորված ՀԿ-ների ոչ թե ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը, այլ վերը նշված միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները՝ որպես հատուկ նպատակի հաշվետվություններ	Ծանրաբեռնվածության մեծացման դիսկ, հետևաբար, առաջարկվել է պարտադիր աուդիտի պահանջ սահմանել միայն հանրային միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվության, այլ ոչ թե ՀԿ-ների ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի նկատմամբ, որոնք ներառում են տեղեկատվություն ոչ միայն հանրային, այլ և այլ միջոցների վերաբերյալ	
«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	Նախագծում	Կատարվել են իրավական տեխնիկայի կանոնների հետ կապված շտկումներ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: